



CONSULT

« 26 » ապրիլ 2011թ.

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | Լիցենզիա ԱՕՆ 052

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ
2010թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ բաժնետերերին

Մենք առողիտի ենք ենթարկել «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ -ի, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 1 հունվարի 2011թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները: Մենք իրականացրել ենք նաև Ընկերության կողմից Կենտրոնական բանկին ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում՝ տեխնիկական պահուստների, հիմնական տնտեսական նորմատիվների պահանջներին, տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխանության մասին: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը:

Մեր պարտականությունն է անցկացված առողիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ մեր պարտականությունն է նաև տալ կարծիք հետևյալի մասին

ա/ Ընկերության ներքին առողիտի գործունեության, ներքին հսկողության համակարգի՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին

բ/ Ընկերության ներքին տեղեկատվական համակարգի առկայության կամ որակի մասին:

գ/ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականության ու հավաստիության մասին:

Առողիտը իր մեջ ներառում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք բույլ են տալիս գնահատել հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիությունը:

Մենք առողիտն անցակացրեցինք առողիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք առողիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Առողիտորական աշխատանքները ներառում են քննադատի հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը և բացահայտումները: Առողիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված առողիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով Ընկերության կողմից տեխնիկական պահուստների համարժեքությանը ներկայացվող պահանջները, տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխմանը ներկայացվող պահանջները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համապատասխանում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

Ընկերության տնտեսական նորմատիվները համապատասխանում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին, բացառությամբ այն հանգամանքի, որ Ընկերությունը չի ապահովել ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի կողմից 311-Ն որոշմամբ սահմանված մեկ փոխառուի գծով դիսկի առավելագույն չափի նորմատիվի (Ն -5 նորմատիվ) պահպանման պահանջը 2010թ. դեկտեմբեր ամսվա արդյունքներով և 31.12.2010թ. դրությամբ՝ «Արարատբանկ» ԲԲԸ գծով:

Ընկերությունը չի ապահովել նաև ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի կողմից 311-Ն որոշմամբ սահմանված Ն -3 նորմատիվի պահպանման պահանջը՝ սկսած 2010թ. փետրվարից այն մշտապես գերազանցել է նորմատիվային սահմանաչափը՝ 10 տոկոս, 31.12.2010թ. դրությամբ կազմելով 15.6 տոկոս:

Ընկերության ներքին աուդիտի գործունեությանը, ինչպես նաև ներքին հսկողության համակարգին ներկայացվող՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները պահպանված են և համապատասխանում են նշված նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

Ընկերության ներքին տեղեկատվական համակարգի ներկա վիճակը գնահատվում է բավարար:
Մեր կարծիքով, բացառությամբ նախորդ մասերում հիշատակված հանգամանքների ազդեցությունից, «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ -ի Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2011թ. ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը, կազմված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ապահովագրական գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Հաստատված է՝
«ԵՐԵՎԱՆ -ԱՌՌԴԻՏ ԿՈՆՍԱՆՏ» ՓԲԸ
Տնօրեն՝  Լ. Ղոնյան
Որակավորման վկայական թիվ 022
Աուդիտոր՝  Ա. Բերբերյան
Որակավորման վկայական թիվ 017

